

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ 2019-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԻԴԻՏԻ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկը հայտարարում է հրապարակային մրցույթ՝ ՀՀ Կենտրոնական բանկի 2019-2021 թվականների ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնելու նպատակով աուդիտորական ընկերություն ընտրելու համար:

Արտաքին աուդիտորը պետք է բավարարի հետևյալ նվազագույն չափանիշներին.

- լինի անկախ Կենտրոնական բանկից, մասնավորապես՝
 - ✓ Կենտրոնական բանկի հետ չպետք է ունենա պայմանագրային կամ այլ իրավահարաբերություններ, որոնք կասկածի տակ կարող են դնել նրա անկախությունը,
 - ✓ որևէ կերպով ներգրավված չլինի Կենտրոնական բանկի որոշումների կայացման գործընթացում,
 - ✓ չլինի Կենտրոնական բանկի և/կամ ֆինանսական համակարգի մասնակիցների և դրանց ղեկավարների հետ փոխկապակցված անձ,
- ունենա միջազգային ճանաչում՝ համաձայն ԿԲ մասին օրենքի 16 հոդվածի պահանջների,
- աուդիտի թիմում ներգրավված աշխատակիցները պետք է ունենան աշխատանքային փորձ և միջազգային հաշվապահական և/կամ աուդիտորական որակավորումներ:
- Երկրորդ երեք տարվա աուդիտի համար Արտաքին աուդիտորը պետք է ներկայացնի աուդիտի համար պատասխանատու նոր ղեկավար, եթե մասնակցում է մրցույթին:
- Վեց տարի անընդմեջ Կենտրոնական բանկի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացրած Արտաքին աուդիտորը չի կարող մասնակցել մրցույթին:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ հասցեով՝ ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6, Հայաստանի Հանրապետություն Կենտրոնական բանկ:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետն է 2019թ. սեպտեմբերի 20-ը ժամը 17:00:

Մրցութային հայտերով ներկայացված «մրցույթի տեխնիկական առաջարկ» պարունակող ծրարների բացումը տեղի կունենա 2019թ. սեպտեմբերի 26-ին ժամը 17:00-ին:

Մրցութային հայտերով ներկայացված տեխնիկական առաջարկների գնահատումը և «մրցույթի գնային առաջարկ» պարունակող ծրարների բացումը տեղի կունենան 2019թ. հոկտեմբերի 11-ին ժամը 17:00-ին:

Մրցութային հայտերով ներկայացված ֆինանսական առաջարկների գնահատումը և մրցույթի արդյունքների ամփոփման նիստը տեղի կունենան 2019թ. հոկտեմբերի 15-ին ժամը 17:00-ին:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի «Մրցույթներ» բաժնում:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀՀ Կենտրոնական բանկի գլխավոր աուդիտոր Արա Չալաբյանին:

ՀՀ Կենտրոնական բանկ, 0010, Երևան, Վ. Սարգսյան 6

Հեռախոս՝ (374 10) 592-581

Ֆաքս (374 10) 523-852

Էլ-փոստ ara.chalabyan@cba.am

Ինտերնետ կայք www.cba.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ 2019-2021
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԻԴԻՏԻ
ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ
ՀՐԱՎԵՐ

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկը հայտարարում է հրապարակային մրցույթ՝ ՀՀ Կենտրոնական բանկի 2019-2021թթ ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնելու նպատակով:

1. Մրցույթի մասնակիցները պետք է ներկայացնեն հետևյալ տեղեկատվությունը.

1. մրցույթի մասնակցի տվյալները՝ այդ թվում՝ անվանումը, գտնվելու վայրը (հասցեն), հեռախոսահամարը,
2. լիցենզիայի ռեկվիզիտները,
3. աուդիտի աշխատանքներին մասնակցող ընկերության փորձը (այդ թվում Կենտրոնական բանկերում),
4. առաջարկում ներկայացված աշխատակիցների որակավորման մակարդակը և փորձը (այդ թվում Կենտրոնական բանկերում),
5. աուդիտի ընդգրկման շրջանակները,
6. աուդիտի իրականացման և աուդիտորական եզրակացության ներկայացման ժամկետները (ներառյալ նախնական աուդիտի անցկացման ժամկետները),
7. աուդիտի իրականացման արժեքը,
8. աուդիտին մասնակցող աշխատանքային խմբի յուրաքանչյուր անդամի կողմից ծախսվող օրերի և ժամերի քանակը (ինչպես տեղում, այնպես էլ հեռակա),
9. հրապարակային մրցույթին մասնակցելու նախավճարի վճարված լինելը հավաստիացնող փաստաթուղթ,
10. լրացուցիչ տեղեկություններ (այդ թվում տեխնիկական և խորհրդատվական աջակցության հնարավորությունները և շրջանակները)

Մրցութային առաջարկությունը պետք է պարունակի երեք տարվա համագործակցության ծրագիր:

Երկրորդ երեք տարվա աուդիտի համար Արտաքին աուդիտորը պետք է ներկայացնի աուդիտի համար պարասխանաբալու նոր ղեկավար, եթե մասնակցում է մրցույթին:

Վեց տարի անընդմեջ Կենտրոնական բանկի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացրած Արտաքին աուդիտորը չի կարող մասնակցել մրցույթին:

2. Մրցույթի պայմանները.

1. Աուդիտորական եզրակացությունը պետք է ՀՀ ԿԲ Խորհրդին ներկայացվի ոչ ուշ, քան տվյալ տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտին հաջորդող տարվա մարտի 21-ը, իսկ «Նամակ ղեկավարությանը» փաստաթուղթը՝ ոչ ուշ, քան՝ մայիսի 1-ը:

2. Օտարերկրյա մասնակիցները մրցութային առաջարկությունները կարող են ներկայացնել անգլերեն լեզվով:
3. Աուդիտորական եզրակացությունը և «Նամակ ղեկավարությանը» փաստաթղթերը պետք է կազմվեն հայերեն և անգլերեն լեզուներով, ընդ որում՝ երկու լեզուներով կազմված փաստաթղթերն էլ պետք է ունենան միևնույն իրավաբանական ուժը:

Մրցութային առաջարկները բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին պետք է ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացվեն մինչև 2019թ. սեպտեմբերի 20-ը, ժամը 17:00՝ կնքված ծրարներով:

Մրցույթը կկայանա ՀՀ Կենտրոնական բանկում, Վազգեն Սարգսյան 6 հասցեում:

Հրապարակային մրցույթում հաղթողի հետ համապատասխան պայմանագիր կնքելիս պայմանագրի էական պայմանները պետք է համապատասխանեն հրապարակային մրցույթի մասին հրապարակային ծանուցմամբ սահմանված պայմաններին:

3. Մրցույթի հայտերի պատրաստման կարգը

1. Մրցույթին մասնակցելու համար Մասնակիցը ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացնում է մրցույթի հայտ: Մրցույթի հայտը սույն հրավերի հիման վրա Մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:
2. Մրցույթի հայտերով ներկայացվող տեղեկությունները և փաստաթղթերը ներկայացվում են երկու փակ և սուսնձված ծրարներում: Ծրարները և հրավերով նախատեսված՝ մասնակցի կողմից կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող իրավասու անձը:

Մրցույթի հայտի առաջին ծրարի վրա կատարվում են հետևյալ գրառումները.

1. «ՀՀ Կենտրոնական բանկ, ք. Երևան, Վ. Սարգսյան 6, 0010» բառերը,
2. «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի 2019-2021թթ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակով աուդիտորական ընկերության ընտրության հրապարակային մրցույթ» բառերը,
3. «մրցույթի գնային առաջարկ» բառերը,
4. «չբացել մինչև մրցույթի հայտերի բացման նիստը» բառերը,
5. մասնակցի անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը կամ կապի այլ միջոցները:

Մրցույթի հայտի առաջին ծրարով ներկայացվում են միայն հրապարակային մրցույթի մասնակցի կողմից առաջարկվող աուդիտի իրականացման արժեքը (ծառայությունների գինը և ծառայությունների գնի հաշվարկման մեթոդը):

Մրցույթի հայտի երկրորդ ծրարի վրա կատարվում են հետևյալ գրառումները.

1. «ՀՀ Կենտրոնական բանկ, ք. Երևան, Վ. Սարգսյան 6, 0010» բառերը,
2. «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի 2019-2021թթ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակով աուդիտորական ընկերության ընտրության հրապարակային մրցույթ» բառերը,
3. «չբացել մինչև մրցույթի հայտերի բացման նիստը» բառերը,
4. «մրցույթի տեխնիկական առաջարկ» բառերը,

5. մասնակցի անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը, կապի այլ միջոցները:

Մրցույթի հայտի երկրորդ ծրարով ներկայացվում են հրապարակային ծանուցմամբ պահանջվող բոլոր այլ տեխնիկական առաջարկները, տեղեկությունները և փաստաթղթերը (բացի գնային առաջարկից բոլոր այլ էական պայմանները և տեղեկությունները, այդ թվում՝ աուդիտի ընդգրկման բնագավառները, աուդիտի իրականացման ժամկետները, աուդիտորական եզրակացության ներկայացման ժամկետները, ինչպես նաև Հրապարակային ծանուցմամբ պահանջվող բոլոր այլ փաստաթղթերը և տեղեկությունները):

4. Մրցույթի մասնակիցների կողմից հայտերի բացմանը և ամփոփմանը ներկա գտնվելը

1. Հրապարակային մրցույթի մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են մրցութային հայտն ընդունելու մասին Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի աշխատակազմի փաստաթղթերի շրջանառության բաժնի կողմից ստորագրված և կնքված համապատասխան տեղեկանքի հիման վրա ներկա գտնվել մրցույթի հայտերի բացման, ինչպես նաև մրցույթի հայտերի ամփոփման նիստերին, նրանք կարող են ծանոթանալ մրցույթի նիստերի արձանագրություններին և պատճենահանել դրանք:
2. Մրցութային հայտերով ներկայացված «մրցույթի տեխնիկական առաջարկ» պարունակող ծրարների բացումը տեղի կունենա 2019թ. սեպտեմբերի 26-ին ժամը 17:00-ին: Մրցութային հայտերով ներկայացված տեխնիկական առաջարկների գնահատումը և «մրցույթի գնային առաջարկ» պարունակող ծրարների բացումը տեղի կունենան 2019թ. հոկտեմբերի 11-ին ժամը 17:00-ին:
3. Մրցութային հայտերով ներկայացված ֆինանսական առաջարկների գնահատումը և մրցույթի արդյունքների ամփոփման նիստը տեղի կունենան 2019թ. հոկտեմբերի 15-ին ժամը 17:00-ին: Մրցույթի մասնակիցները գրավոր կտեղեկացվեն մրցույթի արդյունքների մասին մինչև 2019թ. հոկտեմբերի 16-ը:
4. Մինչև մրցույթի հաղթողին ճանաչելը մասնակիցներից կարող է պահանջվի ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր:

5. Հրապարակային մրցույթին մասնակցելու նախավճարի չափը, վճարելու կարգը և ժամկետները

1. Հրապարակային մրցույթի մասնակիցը, մրցութին մասնակցելու համար, պետք է կատարի 1,000,000 ՀՀ դրամի նախավճարի մուծում:
2. Մասնակիցն իրավունք ունի, մինչև մրցույթի հայտը ներկայացնելը, պահանջել հաստատելու մրցույթի համար վճարված նախավճարի ընդունված լինելու հանգամանքը, որին կպատասխանվի նման հարցում ստանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում:
3. Մրցույթի նախավճարը անհրաժեշտ է փոխանցել ՀՀ Կենտրոնական բանկի N103004617025 հաշվին, իսկ վճարման անդորրագիրը ներկայացնել մրցույթի հայտի երկրորդ ծրարով:
4. Եթե հրապարակային մրցույթը համարվում է չկայացած, նախավճարը վերադարձվում է: Նախավճարը վերադարձվում է նաև մրցութում չհաղթած մասնակիցներին: Սույն կետում նշված նախավճարը վերադարձվում է մրցույթի

արդյունքների մասին արձանագրությունը ստորագրելու կամ մրցույթը չկայացած համարվելու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

5. Մրցույթի հաղթող ճանաչված մասնակցի կողմից սույն հրավերի 9-րդ կետում նշված պայմանագրի ստորագրելու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում նրան վերադարձվում է մուծած նախավճարի գումարը:
6. Մրցույթում հաղթած հաղթող ճանաչված մասնակիցը սույն հրավերի 9-րդ կետում նշված պայմանագիրը կամ մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը ստորագրելուց խուսափելու դեպքում կորցնում է մուծած նախավճարը:
7. Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկը սույն հրավերի 9-րդ կետում նշված պայմանագիրը ստորագրելուց հրաժարվելու դեպքում պարտավոր է նախավճարը վերադարձնել կրկնակի չափով, ինչպես նաև մրցույթում հաղթած անձին հատուցել մրցույթին մասնակցելու հետևանքով կրած իրական ծախսերը:

6. Մրցույթի հայտերի ներկայացման պայմանները

1. Մրցույթի հայտն անհրաժեշտ է ներկայացնել առձեռն կամ փոստային ծառայության միջոցով՝ պատվիրված նամակով: Ներկայացված մրցույթի հայտերն ընդունում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի աշխատակազմի փաստաթղթերի շրջանառության բաժինը:
2. Հրապարակային մրցույթին մասնակցելու համար ցանկություն հայտնած մասնակիցները մինչև հայտերի ներկայացման վերջնական ժամկետի ավարտը կարող են հետ վերցնել մրցույթի հայտերը (հրաժարվել մրցույթին մասնակցելուց): Մրցույթի հայտի փոփոխությունը կատարվում է սույն հրավերով մրցույթի հայտ ներկայացնելու համար նախատեսված կարգով՝ համապատասխան ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը: Մրցույթին մասնակցելուց հրաժարվելու դեպքում այդ մասին ծանուցումը կարող է ուղարկվել նամակով կամ ֆաքսով:

7. Հրավերում փոփոխություններ և լրացումներ կատարելը, մրցույթից հրաժարվելը

1. Մրցույթի պայմաններում, ինչպես նաև մրցույթի հայտերը բացելու օրերի և ժամերի վերաբերյալ փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում ՀՀ Կենտրոնական բանկը կատարում է համապատասխան փոփոխություններ և (կամ) լրացումներ հրավերում (այսուհետ՝ հրավերի փոփոխություն): Սույն կետում նշված հրավերում փոփոխություններ կատարելու դեպքում, այդ մասին ծանուցվում են հրավեր ստացած բոլոր մասնակիցները:
2. Հրավերում փոփոխությունները կարող են կատարվել մինչև մրցույթի հայտերի բացման օրը: Հրապարակային ծանուցմամբ հրավերում փոփոխություններ կատարելու դեպքում մասնակիցները իրավունք ունեն 30 օրյա ժամկետում և սույն հրավերով սահմանված կարգով մրցութային հայտերում կատարել լրացուցիչ փոփոխություններ: ՀՀ Կենտրոնական բանկը հրավերի պայմանների փոփոխության դեպքում չի կրում մասնակիցների կողմից կրած վնասների ռիսկը:
3. Հրավերում թույլատրվում է կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում մրցույթի պայմանների մասին հայտարարության մեջ նշված էական պայմանները:

8. Մրցույթի փաստաթղթերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու կարգը

1. Մասնակիցն իրավունք ունի ՀՀ Կենտրոնական բանկից պահանջել մրցույթի հրավերի պարզաբանում: Սույն հրավերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար Մասնակիցը կարող է դիմել ՀՀ Կենտրոնական բանկի գլխավոր աուդիտոր Արա Չալաբյանին: Այդպիսի պարզաբանումների պահանջները կարող են ներկայացվել ոչ ուշ, քան մրցույթի հայտերի ընդունման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ աշխատանքային օր առաջ:
2. ՀՀ Կենտրոնական բանկը պարզաբանումը տրամադրում է հարցումն ստանալու օրվանից երկու աշխատանքային օրվա ընթացքում: ՀՀ Կենտրոնական բանկը տրամադրված պարզաբանումների մասին գրավոր ծանուցում է մրցույթի հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին:
3. Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն գլխի 1 կետով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է մրցույթի հրավերի բովանդակության շրջանակից:

9. Մրցույթի հաղթողի ընտրության կարգը

1. Հաղթողին որոշում է ՀՀ Կենտրոնական բանկի խորհուրդը՝ մասնակիցներից լավագույն պայմաններ ներկայացրած անձանցից:
2. Մրցույթի հաղթող կճանաչվի այն մասնակիցը, որը մրցութային հանձնաժողովի եզրակացությամբ ներկայացրած կլինի հրապարակային մրցույթի լավագույն պայմաններ:
3. Հաղթող ճանաչված աուդիտորական կազմակերպության հետ պայմանագիրը կկնքվի մինչև 2019թ. հոկտեմբերի 31-ը:
4. Հաշվապահական հաշվառման և աուդիտորական ընթացակարգերի վերաբերյալ Կենտրոնական բանկի և Արտաքին աուդիտորի միջև որևէ անհամաձայնություն չի կարող հիմք հանդիսանալ պայմանագրի դադարեցման համար:

Հրապարակային մրցույթի կանոնակարգին կարող եք ծանոթանալ ՀՀ ԿԲ ինտերնետ կայքում: